# Տեղեկությունների Նորություն ՝ 2006թ.

2006թ.

Այս թղթիկը ներկայացնում է 2006 թուականի նորությունները եւ փոփոխությունները, օրինակ Սոցիալական Ապահովության հարկերը եւ նպաստները: Օրէնքով այս թիվերը ամեն տարի ինքնաբերաբար փոփոխվում են կյանքի ծախսերու եւ եկամուտի հաւելման համապատասխանելու նպատակով: Եթէ դուք աշխատում եք կամ ստանում Սոցիալական Ապահովության նպաստներ, այս փոփոխությունները կարեւոր են ձեզ համար:

## Աշխատողների համար տեղեկություն

| Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի (Medicare) Հարկեր | | |
|---|---|---|
| ***Սոցիալական Ապահովության հարկեր*** | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| Աշխատող/գործատու (իւրաքանչիւր) | 90,000 դոլար հասույթից 6.2% | 94,200 դոլար հասույթից 6.2% |
| Ինքնաշխատ<br>*Կարող է փոխհատուցվի տարուա եկամուտի հարկերի դրությունններով | մինչեւ 90,000 դոլար հասույթից 12.4% * | մինչեւ 94,200 դոլար հասույթից 12.4% * |
| ***Մէտիքէրի հարկեր*** | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| Աշխատող/գործատու (իւրաքանչիւր) | 1.45% ընդհանուր հասույթից | 1.45% ընդհանուր հասույթից |
| Ինքնաշխատ<br>*Կարող է փոխհատուցվի տարուա եկամուտի հարկերի դրությունններով | 2.9% * ընդհանուր հասույթից | 2.9% * ընդհանուր հասույթից |
| ***Աշխատանքի վարկեր. Աշխատելու ընթացքում դուք վաստակում եք վարկեր ի հաշիվ Սոցիալական Ապահովության նպաստների:*** Սոցիալական Ապահովության նպաստներու իրավասու լինելու նպատակով, ձեզ անհրաժեշտ է ունենալ վարկերի որոշակի քանակ: Ձեզնից պահանջվող վարկերու քանակը կախյալ է ձեր տարիքից եւ նպաստի տեսակից: Իւրաքանչիւր տարի դուք առավելագույնը կարող եք ստանալ չորս վարկ: Ընդհանրապէս ծերության նպաստներ ստանալու իրավասու լինելու համար պահանջվում է 40 վարկ: | | |
| | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| | 920 դոլարը վաստակում է 1 վարկ | 970 դոլարը վաստակում է 1 վարկ |

## Տեղեկություն Սոցիալական Ապահովության նպաստներ ստացողների համար

| Հասույթի Սահմանները | | |
|---|---|---|
| Կառավարական օրէնքի համաձայն, անոնք որոնք ստանում են Սոցիալական Ապահովության նպաստներ իրենց լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքից առաջ, իրավունք ունեն ստանալու իրենց բոլոր նպաստները, եթէ իրենց հասույթը ներկայացված սահմաններից ցած է: 2006 թուականին լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքն է 65 տարի եւ 8 ամիս: Լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը ամեն տարի աստիճանաբար կբարձրանա՝ մինչեւ այն հասնի 67 տարիք 1960 թուականին կամ աւելի ուշ ծնվածների համար: | | |
| | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| Լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքին կամ աւելի ուշ | Հասույթը սահման չունի | Հասույթը սահման չունի |
| Լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ | 1 դոլար պակսում է ամէն 2 դոլարի փոխարէն եթէ ձեր տարեկան հասույթը 12,000 դոլարից աւելի ըլլայ: | 1 դոլար պակսում է ամէն 2 դոլարի փոխարէն եթէ ձեր տարեկան հասույթը 12,480 դոլարից աւելի ըլլայ: |
| Լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը հասնելու տարին | 1 դոլար պակսում է ամէն 3 դոլարի փոխարէն եթէ ձեր տարեկան հասույթը 31,800 դոլարից աւելի ըլլայ: Սա կը դադրի այն ամիսը որ դուք կը հասնիք ձեր լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը: | 1 դոլար պակսում է ամէն 3 դոլարի փոխարէն եթէ ձեր տարեկան հասույթը 33,240 դոլարից աւելի ըլլայ: Սա կը դադրի այն ամիսը որ դուք կը հասնիք ձեր լրիւ կենսաթոշակի անցնելու տարիքը: |
| ***Հաշմանդամության նպաստառուների հասույթի սահմանները***՝ Եթէ դուք հաշմանդամության նպաստներ ստանում եք եւ աշխատում, պետք է մեզ հայտնեք ձեր աշխատանքի մասին ու հասույթի արժէքը: Դուք կարող եք ունենալ անսահմանափակ հասույթ մինչեւ ինը ամիս աշխատելու փորձաշրջանի ընթացքում (ոչ անպայմանօրէն յաջորդական) եւ շարունակել ստանալ նպաստներ: Ձեր աշխատելու իննամսյա փորձաշրջանը ավարտելուց հետո, մենք կը որոշենք եթէ դուք այլեւս իրավասու եք ստանալու հաշմանդամության նպաստները: Դուք նաեւ կարող եք իրավասու լինել աշխատանքի մղող այլ ծառայությունների որպէսզի կարողանաք աշխատանքի վերադառնալ: | | |
| Բաւարար Նիւթական Հասույթ (Substantial Gainful Activity) (ոչ կույր) | 830 դոլար ամսական | 860 դոլար ամսական |
| Բաւարար Նիւթական Հասույթ (կույր) | 1,380 դոլար ամսական | 1,450 դոլար ամսական |
| Աշխատանքային իննամսյա փորձաշրջանեն մի ամիս կը նվազի եթէ ձեր վաստակը ըլլայ | 590 դոլար ամսական | 620 դոլար ամսական |

(շրջել)

## Տեղեկություն Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) ստացողներու համար

| Սոցիալական Ապահովության Եկամուտի Դաշնակցային Առաւելագոյն Վճարումներ | | |
|---|---|---|
| | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| Անհատ | 579 դոլար | 603 դոլար |
| Զույգ | 869 դոլար | 904 դոլար |
| ***Ամսական եկամուտի սահմաններ*** | | |
| Անհատ, որի եկամուտը միայն աշխատավարձից է | 1,243 դոլար | 1,291 դոլար |
| Անհատ, որի եկամուտը աշխատավարձից չէ | 599 դոլար | 623 դոլար |
| Զույգ, որոնց եկամուտը միայն աշխատավարձից է | 1,823 դոլար | 1,893 դոլար |
| Զույգ, որոնց եկամուտը աշխատավարձից չէ | 889 դոլար | 924 դոլար |
| ***ԾԱՆՈՒՑՈՒՄ*** *Եթէ դուք ունեք ուրիշ եկամուտ, ձեր նպաստի գումարը , որպես կանոն, կլինի Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դաշնակցային վճարումից ցածր: Հիշե՛ք, որ դուք պետք է հայտնեք ձեր բոլոր եկամուտները մեզ: Որոշ նահանգների կողմից Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դաշնակցային վճարմանը որոշակի գումար է ավելացվում: Եթէ դուք ապրում եք այդ նահանգներից մէկում, կարող եք աւելի բարձր վճարում ստանալ, նոյնիսկ եթէ ձեր եկամուտը նշված սահմաններից աւելի բարձր լինի:* | | |

## Տեղեկություն Մէտիքէր (Medicare) ունեցողներու համար

| Մէտիքէրի (Medicare) ծախսը մեծամասնությամբ այս տարի բարձրանում է որպէսզի համակերպի առողջապահական ծախսերի բարաձրացման հետ | | |
|---|---|---|
| | ***2005թ.*** | ***2006թ.*** |
| ***Հիվանդանոցի ապահովագրություն (Ա մաս) (Part A)*** | | |
| Հիվանդանոցում առաջին 60 օրվա համար՝ հիվանդը վճարում է | 912 դոլար | 952 դոլար |
| Հիվանդանոցում 61-ից մինչեւ 90-րդ օրը՝ հիվանդը վճարում է | օրական 228 դոլար | օրական 238 դոլար |
| Հիվանդանոցում 90-րդ օրից հետո (յաւելեալ 60 օրերու համար)՝ հիվանդը վճարում է | օրական 456 դոլար | օրական 476 դոլար |
| Մասնագիտական ծերերու բուժարանում առաջին 20 օրվա համար՝ հիվանդը վճարում է | 0 դոլար | 0 դոլար |
| Մասնագիտական ծերերու բուժարանում 21-ից մինչեւ 100-րդ օրը՝ հիվանդը վճարում է | օրական 114 դոլար | օրական 119 դոլար |
| Ա Մաս (Part A) գնելու արժէքը՝ Այդ գումարը որը դուք վճարելու եք Մէտիքէրի Ա Մասին համար, կախյալ է ձեր կողմից վաստակած Սոցիալական Ապահովության վարկերի քանակից: Եթէ ունեք | | |
| 40 վարկ | 0 դոլար | 0 դոլար |
| 30-39 վարկ | ամսական 206 դոլար | ամսական 216 դոլար |
| 30-ից քիչ վարկ | ամսական 375 դոլար | ամսական 393 դոլար |
| ***Բժշկական ապահովագրություն (Բ Մաս) (Part B)*** | | |
| Ձեր շահաբաժինը | ամսական 78.20 դոլար | ամսական 88.50 դոլար |
| Ձեր պարտքը | տարեկան 110 դոլար | տարեկան 124 դոլար |
| | Հիվանդը պարտքի գումարը վճարելուց հետո, Բ Մասը վճարում է ընդգրկված ծառայությունների 80 տոկոսը: | |
| ***ԾԱՆՈՒՑՈՒՄ***՝ *Եթէ դուք ստանում եք Մէտիքէր եւ ձեր եկամուտը քիչ է, ձեր նահանգը կարող է վճարել ձեր Մէտիքէրի շահաբաժինը եւ որոշ դէպքերում ձեր տարեկան պարտքն ու կանխիկ վճարվող այլ բժշկական ծախսերը: Յաւելեալ տեղեկություն ստանալու համար դիմե՛ք ձեր տան մօտ գտնուող բժշկական օգնության գործակալությանը (Մէտիքէլ կամ Մէտիքէյտ MediCal or Medicaid), սոցիալական ծառայության կամ ընդհանուր օգնության գրասենյակին:* | | |



Social Security Administration
SSA Publication No. 05-10003-AM
Update 2006 (Armenian)
January 2006